ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(30 մարտի 1986 թ.)

Աստվածորդու Հարության լույսը այսօր մի անգամ ևս ճառագայթում է մեր հոգիների վերև, իր հետ բերելով բալասանը խնդության, միսիթարության և հավերժական կյանքի հույսի:

Սուրբ Զատկի տոնախմբումը մեզ շնորհում է սքանչելի պահը խորհրդածելու՝ մեր կյանքի իմաստի մասին, մեր ճակատագրի մասին, մեր հոգու փրկության մասին, խորհրդածություն, որ մղում է մեզ մեր հոգու հայացքը ուղղել դեպի քրիստոնեական ճշմարտությունը՝ մեղքի կապանքներից ազատվելու և արժանի դառնալու անանց մի կյանքի, հարուցյալ Քրիստոսի հետ:

Այսօր մտաբերում ենք մարգարեությունը մեծն Եսայու, թե՝ «Յարիցեն մեռեալք և կանգնեսցին որ իցեն ի գերեզմանս, և ուրախ եղիցին յերկրի» (Եսայի ԻԶ 19):

Այսօր մտաբերում ենք մանավանդ Հիսուսի խոսքերը, թե՝ «Ամէն, ամէն ասեմ ձեզ, վի գայ ժամանակ և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ և որք լսիցենն կեցցեն» (Հովհ. Ե 25):

Իսկ Ոսկեբերան հայրապետը Հովհաննես, պատգամում է բոլորիս՝ «Ոչ ոք թող չհուսահատվի և ոչ ոք չվհատվի իր մեղքերի համար, որովհետև մե-

դաց թողությունը ծագեց գերեզմանից. ոչ ոք չվախենա մահից, կի Փրկչի մահը մեզ ազատեց մահից»:

Իրոք, Տիրոջ Հարության ավետիսը թափանցում է մեր էության մեջ որպես խորհրդավոր մի հուզում փրկության հույսի և ավելին՝ որպես մի թաքուն սարսուռ թե նաև մեր լուսաբնակ նախնիք նույն հույսով են ապրել ինչպես մենք այսօր, և դարեր ու դարեր նույն հավատքով են դիմավորել Հարության առավոտը, Սուրբ Հոգով պարուրված: Զոհաբերումը և Հարությունը Հիսուսի, մեր նախնյաց համար դարեր շարունակ հանդիսացել են գերագույն ստուգությունը այն մեծ ճշմարտության, որ միայն զոհաբերությամբ, տքնությամբ կարելի է հասնել մեծ իրագործումների, տառապանքով՝ անանց ուրախությունների, մահվան ճանապարհով՝ հավերժական կյանքի:

Սիրելի հավատացյալներ, այսպես ահա տոնախմբում ենք մենք ևս այսօր Սուրբ Զատիկը, վերածնվող բնության գարնանային այս լուսաբացին:

Այս տարի ևս քայլեցինք քառասնօրյա պահոց ապաշխարության, արևագալի և կիրակնօրյա եկեղեցական հոգեպարար արարողությանց ճանապարհով: Հոգևին ուղեկցեցինք Հիսուսին դեպի Գողգոթա, փորձելով կրել մեր ուսերի վրա տանջող ծանրությունը խաչի՝ զղջումով, պահեցողությամբ, աղոթքներով և բարի գործերով: Ապա ծանր լռությամբ ապրեցինք Հիսուսի տառապանքն ու մահը խաչափայտի վրա: Իսկ այսօր, ով հրաշք, ցնծությամբ դիմավորում ենք մեծ ավետիսը Նրա ամենահաղթ Հարության:

Մեր մարդկային սահմանափակ մտածողությամբ դժվար է թափանցել հեռու հորիզոնը Քրիստոսի մահվան ու Հարության տիեզերական խորհրդի, սակայն սուրբ առաքյալներն ու երանելի հայրերը մեր, իրենց հոգու վկայություններով լուսավորում են մեր գիտակցությունը՝ ըմբռնելու և ապրելու այդ խորհրդի հոգևոր ճշմարտությունը: Հիշենք վկայությունը հեթանոսաց առաքյալ Պողոսի՝ «Ինչպես մի մարդով եկավ մահը, այնպես էլ մի ուրիշ մարդով՝ մեռելների հարությունը: Ինչպես Ադամով բոլոր մարդիկ մեռնում են, այնպես էլ Քրիստոսով բոլորը ապրելու են» (Ա Կորնթ. ԺԵ 21—22):

Մենք հավատում ենք, որ Հարության լույսը ուժգին ճառագայթել է մեր լուսաբնակ նախնյաց հոգիներում ու նրանց ոգեշնչել մահվամբ մահը հաղթելու տեսիլքը, ի փրկություն նրանց՝ մեղքերի կապանքներից և ի ժառանգություն հավիտենական կյանքի:

Մահվամբ մահը հաղթելու տեսիլքը մղել է նրանց մաքառելու, պայքարելու և նահատակվելու իսկ, վասն Հիսուսի և վասն հայրենյաց, վասն իրենց կյանքի ազատության ու խաղաղության:

Այդ տեսիլքի լույսը ճառագայթում է այսօր էլ մեր բոլորիս վրա, մեր ազգի բոլոր զավակների վրա: Այդպես է որ մենք՝ այսօրվաններս, ոգեպես միանում ենք, նույնանում մեր նախնիների իդեալների հետ, միևնույն Աստուծո օրհնության և շնորհների ներքև:

Այս լույսով պարուրված, այս հույսերով ոգեշնչված մեր ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, տքնում է, զոհաբերում է, մաքառում է հանուն իր ինքնության անաղարտ պահպանության, հանուն ստեղծարար գործերի իրականացման, հանուն հոգևոր ու ազգային իդեալների կենսագործման, երկու միլիոն մեր նահատակների հիշատակի անմոռաց պահպանման, որոնք 1915—1916 դաժան տարիներին իրենց աչքերը փակեցին հավատ տառապանքների մեջ, իրենց երազանքների իրականացումը թողնելով հաջորդ սերունդներին որպես սրբազան կտակ:

Այսօր, երբ տոնախմբում ենք սուրբ հրաշքը մեծ Հարության, այսօր, 70 տարի հետո ցեղասպանության դժոխային օրերից, չենք կարող չապրել տոնական ուրախությունը մեր ազգային հայրենական վերածնդի, տոնախմբումը մեր նոր կյանքի և ստեղծարար վիթխարի իրագործումների մեր հայրենաբնակ ժողովրդի, եղբայրական ազգությունների մեծ ընտանիքում, աննախընթաց անվտանգության և խաղաղության պայմաններում:

Հայ Եկեղեցու ամեն մի զավակ, ամեն մի հայ սիրտ, ուր որ բնակվելիս լինի, Զատկական այս արևոտ օրերին, ի տես հայրենի վերաշինության ու ծաղկման, զգում է վերածնդի ուրախությունը, զգում է նոր կյանքի երգը, զգում է և հավատում հայոց է՛լ ավելի պայծառ ապագային:

Ինչպես գերեզմանը մեր Փրկչի Հիսուսի, այնպես էլ գերեզմանը հայոց ազգի դատարկ է այլևս: Եթե Տեր Զորի անապատներում ուխտի գնանք այսօր, կարող ենք լսել լուռ ձայնը բարի հրեշտակի՝ «Ինչո՞ւ եք փնտրում կենդանիներին մեռյալների մեջ, նրանք այստեղ չեն, նրանք հարություն են առել ու հավետ պիտի ապրեն»:

Սիրեցյալներ Մեր, Հարության ավետիսը տոնախմբումն է մահի պարտության, տոնախմբումն է կյանքի մշտանորոգ ծաղկումի, տոնախմբումն է բարու ուժերի հաղթության ընդդեմ չարի, տոնախմբումն է խաղաղության և սիրո թագավորության:

Մենք աղոթում ենք, որ բոլորդ արժանի դառնաք վայելելու կենարար բարիքները Սուրբ Հարության ձեր ընտանեկան երջանիկ հարկերի ներքո, ձեր համայնքային ու ընկերային կյանքում:

Մնում ենք նաև աղոթող, որ այս Զատիկը աշխարհին բերի մեծ ավետիսը խաղաղության դատի վերջնական հաղթության, ավետիսը բոլոր մահաստուռ վենքերի խորտակման, ավետիսը պատերազմ կոչված հրեշի յոթ գլուխների ջախջախման, ավետիսը ազգությունների վերջնական համերաշխության և պետությունների խաղաղ գործակցության, արդարության արևի ներքո:

«Զի Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»: Ամեն: